

ԱՍՏՈՒԾՈՅ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Այժմ ես կըգամ, ասում է Աստուած,
 Օգնել աղքատին իր ծանրը կըուում.
 Ձեմ թողնիլ նրան յաւիտեան լըքած,
 Նա ինձ ապաւէն կանչեց նեղ օրում:

Վայ ձեզ, հըղօրներ, որ իր խըրճիթում
 Լացացրիք խեղճին, այրուն ու որբին,
 Ու վէս, անպատիժ՝ ասիք ձեր սըրտում—
 Ո՞վ է վերեւից նայում մեր ճամբին:

Միթէ կարծում էք չէր տեսնում—լըսում
 Նա, որ ստեղծեց և աչք և ախանջ,
 Միթէ կարծում էք ոյժն էր պակասում,
 Եթէ համբերեց դատելուց առաջ:

Իմ աչքերն անթարթ ձեր ճամբի վըրայ—
 Հըսկել եմ անքուն ես ձեր գործերին,
 Էլ չեմ գանդաղիլ—գալիս եմ, ահա,
 Ե՛ս, Տէր զօրութեանց—և հուրն իմ ձեռին:

Ես հուր եմ ձըղում ճընշւածի հոգին—
 Նորա համարձակ լեզուվ ձեզ դատեմ,
 Ես ոյժ եմ տալիս աղքատի բազկին,
 Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր գէմ:

Յովհաննէս Թումանեանց

